Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 34

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2008թ. սեպտեմբերի 9-ին ժամը 16:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Սամվել Ավետիսյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Կարեն Նազարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ

Նիստին հրավիրված էր.

Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման խորհրդի քարտուղար
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Ռուզաննա Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Տիգրանուհի Բաղդասարյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող 9-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

   ա/ Հատկացման հայտ և եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,
   բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,
   գ/ Աշխատանքային պլան,
   դ/ Ամփոփ հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,
   ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի Պայմանագիր No RRRP-CW-03/2007 Լոտ 1, Լոտ 2, Լոտ 3, Լոտ 4, Լոտ 5 և Լոտ 6-ում ընդգրկված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքների իրականացման համար կնքված պայմանագրերի փոփոխության նախագծի քննարկում և հաստատում:

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում Գյուղատնտեսական գործունեության հետազոտության հաջորդ փուլերի համար խորհրդատվական ծառայությունների պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

4. Այլ հարցեր՝

   ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատուի հաստիքը վերանայելու և աշխատանքային պայմանագրում փոփոխություններ կատարելու հարցի քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Նշվեց, որ մեծամասամբ կատարման նախապայմանները բավարարված են, բացի մի քանիսից, որոնք գտնվում են իրականացման գործընթացում: Մասնավորապես Արա Հովսեփյանը նշեց հետևյալ երկու նախապայմանների հարցը՝

- «Կառավարությունը մշակել և ընդունել է օրենսդրություն և/կամ այլ իրավական ակտեր, կամ փոփոխել է գործող օրենսդրական կամ այլ իրավական ակտերը, որպեսզի հեշտացնի գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը»,

- «Կառավարությունը մշակել և ընդունել է օրենսդրություն և/կամ այլ իրավական ակտեր, որպեսզի բարելավի գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալները, այդ թվում՝ ոլորտի հաշվապահական հաշվառումը և տվյալների հավաքման ընթացակարգերը»:

Առաջին նախապայմանի վերաբերյալ առկա է ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2008թ. հունիսի 13-ի հանձնարարականը ՀՀ կառավարության աշխատակազմին՝ հետամուտ լինել համապատասխան նախարարությունների կողմից այդ նախապայմանի իրականացմանը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ երկու-երեք ամիս առաջ քննարկում է ունեցել ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ էկոնոմիկայի նախարարների հետ, որի արդյունքում ՀՀ արդարադատության նախարարին հանձնարարվել է զբաղվել այս հարցի լուծմամբ:

Արա Հովսեփյանը խնդրեց պարզաբանել, թե արդյոք համապատասխան օրենսդրական փոփոխությունները կատարված կլինեն մինչև 2008թ. վերջ, այսինքն մինչև հաջորդ հատկացման հայտի ներկայացումը և միաժամանակ կառավարման խորհրդին տեղեկացրեց, որ տվյալ կատարման նախապայմանն արդեն մեկ տարի է հետաձգվում է և ըստ նախնական տեղեկատվության ՀՄԿ-ն ամենայն հավանականությամբ ևս մեկ անգամ չի հետաձգի տվյալ նախապայմանի իրականացման ժամկետը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտնեց, որ այդ գործընթացը 2-3 ամսից ավելի երկար կտևի և մինչև տարվա վերջ դեռևս ամբողջովին իրականացված չի լինի՝ ավելացնելով, որ նախագծերն առաջիկա մեկ ամսվա ընթացքում կներկայացվեն ՀՀ կառավարության քննարկմանը, իսկ այնուհետև կուղարկվեն ՀՀ Ազգային Ժողով:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե ներկայումս կան արդյոք որևէ խոչընդոտներ գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման համար:

Ներսես Երիցյանը պարզաբանեց, որ այդպիսի խոչընդոտներ չկան, սակայն այս գործընթացի արդյունքում գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումն ավելի կհեշտանա և հնարավորություն կընձեռնվի ֆիզիկական անձանց միավորվելու և ստեղծելու այդպիսի կոոպերատիվներ:

Երկրորդ նախապայմանի վերաբերյալ Սամվել Ավետիսյանը հայտնեց, որ ներկայումս շրջանառվում է «Գյուղատնտեսության համատարած հաշվառման մասին» օրենքի նախագիծը, որը մեկանգամյա ակտ է և որի արդյունքում կստեղծվի հատուկ տեղեկատվական բազա: Սակայն ՀՀ կառավարությունն այս հարցում արդեն մեկ քայլ առաջ է գնացել և նախատեսում է ստեղծել վարչական վիճակագրական ռեգիստր, որն ի տարբերություն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության օժտված կլինի որոշակի վարչական գործառույթներով, որն էլ հնարավորություն կընձեռնի վերջինիս համապատասխան մարմիններից պահանջելու և ստանալու անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը ռեգիստի կայացման և վարման համար:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե ե՞րբ է հնարավոր այդ ռեգիստրի ստեղծումը:

Սամվել Ավետիսյանը պարզաբանեց, որ դեռևս կան որոշակի ֆինանսական խնդիրներ, որոնց շուտափույթ լուծման դեպքում 2009թ. կեսերից ակնկալվում է, որ ռեգիստրը կգործի:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե այս հարցով ՀՀ կառավարությունը ՀՄԿ-ի առջև ի՞նչ պարտավորություններ ունի և ե՞րբ պետք է այդ նախապայմանը կատարվի:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ՀՀ կառավարության պարտավորությունն է հանդիսանում համապատասխան օրենսդրական ակտի ընդունումը և վերջինս ենթակա է կատարման մինչև այս տարվա վերջ:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանին հանձնարարեց իր անմիջական հսկողության տակ վերցնել և հետամուտ լինել տվյալ նախապայմանի կատարմանը:

Արմեն Գևորգյանը խնդրեց պարզաբանել, թե առ այսօր ՀՄԿ-ից ընդհանուր առմամբ որքա՞ն գումար է ստացվել և արդյոք որևէ գումար ստացվել է ճանապարհաշինության մասով:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ընթացիկ եռամսյակի վերջի դրությամբ ծրագրի փաստացի և կանխատեսվող (սեպտեմբեր ամսվա) ծախսերի ընդհանուր գումարը կազմում է 23,493,429 (քսաներեք միլիոն չորս հարյուր իննսուներեք հազար չորս հարյուր քսանինը) ԱՄՆ դոլար՝ միաժամանակ ավելացնելով, որ Ճանապարհաշինության ենթածրագրի համար գումար ստացվել է, սակայն ոչ Ճանապարհաշինության Առաջին փաթեթի մասով:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե ո՞ր ճանապարհահատվածի համար է ստացվում գումարը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ գումարը ստացվում է Արմավիր-Իսահակյան-Գյումրի ճանապարհի 49-րդ կմ-ից մինչև 74-րդ կմ ընկած ճանապարհահատվածի (Գետափ-Աղին) շինարարության ֆինանսավորման համար՝ 24,5 կմ ընդհանուր երկարությամբ, որի մեծ մասն արդեն իսկ կատարված է: Շինարարական աշխատանքներն իրականացվում են Դորոժնիկ ընկերության կողմից: Վերոնշյալ հատվածում առկա են երկու կամուրջ, որոնց վերականգնման աշխատանքները ներկայումս ընթացքի մեջ են: ՀՄՀ-Հայաստանը նախատեսում է, որ այս ճանապարհահատվածի շինարարությունը կավարտվի նոյեմբեր ամսին:

Արմեն Գևորգյանը հայտնեց, որ վերապահումներ ունի կապված այդ ճանապարհահատվածի շինարարությունն իրականացնող Դորոժնիկ ընկերության կապակցությամբ:

Գուրգեն Սարգսյանը տեղեկացրեց, որ տրանսպորտի նախարարությունը այցելել և ուսումնասիրել է Դորոժնիկի կողմից կատարվող աշխատանքը և ակնհայտ է, որ ընկերությունը բավականին լրջորեն է վերաբերվում աշխատանքի իրականացմանը:

Կարեն Նազարյանը խնդրեց պարզաբանել, թե արդյոք հատկացման ընթացքն ըստ հատկացման ժամանակացույցի է ընթանում, թե կան ուշացումներ և եթե կան, ապա ՀՄՀ-Հայաստանն ի՞նչ միջոցառումներ է ձեռնարկում դրանց վերացման ուղղությամբ:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ուշացումներ կան միայն ճանապարհաշինության Առաջին փաթեթի մասով, որի վերաբերյալ նախորդ նիստերի ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ: Առաջին տարվա հատկացումները ստացվել են ըստ Համաձայնագրով նախատեսված ժամանակացույցի, ինչը չի կարելի ասել երկրորդ տարվա մասին: Ներկայումս ՀՄՀ-Հայաստանն արդեն իսկ ձեռնամուխ է եղել Առաջին փաթեթի շինարարական աշխատանքների իրականացմանը՝ ի շնորհիվ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել ՀՄՀ-Հայաստանի գնումների վերանայված պլանը, ՀՄԿ-ին ներկայացվող 9-րդ հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ առաջին մոբիլիզացիոն հաշվետվությունները ներկայացվել են ըստ պայմանագրի: Ըստ պայմանավորվածության ներկայումս անհրաժեշտ է վերանայել պայմանագիրը՝ համաձայն հուլիսի 17-ին կայացած բանակցությունների արդյունքների:

Ներսես Երիցյանը տեղեկացրեց, որ վերջերս Համաշխարհային բանկի հետ համատեղ տեղի ունեցած քննարկումների ժամանակ բարձրացվել է ճանապարհաշինության ժամանակ ինտերնետ կապի կապրոնե ուղիների անցկացման խնդիրը, որը հետագայում հնարավոր կլինի վարձակալության տրամադրել ինտերնետային ծառայություններ մատուցողներին:

Գուրգեն Սարգսյանը հայտնեց, որ վերջիններիս իրականացման համար անհրաժեշտ է փոփոխություններ կատարել կիրառվող նորմատիվներում, որպեսզի նախագծողները հետագայում հաշվի առնեն և այն ներառեն իրենց գծագրերում:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը ՀՀ տրանսպորտի և ՀՀ էկոնոմիկայի նախարարներին հանձնարարեց համատեղ քննարկել այս հարցը:

Արմեն Գևորգյանը հարցրեց, թե ճանապարհաշինարարական աշխատանքները ֆիզիկապես ե՞րբ են սկսվել:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ պայմանագրի մեկնարկը եղել է օգոստոսի 1-ին, իսկ հողային աշխատանքները սկսվել են օգոստոսի վերջին:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հետաքրքրվեց, թե մինչև տարվա վերջ ՀՀ պետական բյուջեից հատկացված 16,8 մլն. ԱՄՆ դոլարից որքա՞ն գումար կծախսվի:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ համաձայն ներկայացվող տվյալների, ամբողջ ծավալը հնարավոր է իրականացնել:

Գուրգեն Սարգսյանը ավելացրեց, որ շինարարական աշխատանքների դեպքում տեմպերը դանդաղ են լինում ոչ թե տեխնիկական հագեցածության, այլ ֆինանսավորման ուշացման պատճառով:

Արմեն Գևորգյանը նշեց, որ բավականաչափ հողային աշխատանքների կարիք է զգացվում, սակայն ասֆալտե շերտով ծածկման մասին խոսք լինել չի կարող, քանի որ նոյեմբերին ՀՀ որոշ մարզերում ջերմաստիճանը բավականին ցածր է լինում: Միաժամանակ ավելացնելով, որ անհրաժեշտ է կապալառուներին ֆինանսավորում տալ, որպեսզի կարողանան բիտում և այլ շինարարական նյութեր ձեռք բերել, քանի որ ձմռան ամիսներին վերջիններս ավելի էժան են լինում:

Տիգրան Դավթյանը հայտնեց, որ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներից երկու փոխանցում է կատարվել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հաշվին, սակայն հայտ է ներկայացվել մինչև սեպտեմբերի վերջ մնացած գումարների ստացման համար, միաժամանակ ավելացնելով, որ 2009թ. պետական բյուջեով ՀՄԿ-ի հատկացման գումարը նախատեսված է մոտավորապես 40 մլն. ԱՄՆ դոլարի չափով:

Արա Հովսեփյանը նշեց, որ ներկա պարագայում ծրագրի առջև խնդիր կա տարեկան ծախսել մոտ 70 մլն. ԱՄՆ դոլար, իսկ եթե որևէ անկանխատեսելի հանգամանքների բերումով ծրագիրը կրկին հետ ընկնի նախատեսված աշխատանքներից, ապա սա կհանդիսանա լուրջ խնդիր:

Ներսես Երիցյանը հայտնեց, որ անհրաժեշտ է կիրառել եվրոպական ստանդարտներ: Այս հարցը ենթակա է լուրջ քննարկման, քանի որ հակառակ պարագայում արտասահմանյան ընկերությունները չեն մասնակցի հայաստանյան մրցույթներին: Այս իրավիճակն արդեն իսկ առկա է:

Գուրգեն Սարգսյանը հայտնեց, որ բազմաթիվ հանդիպումներ է ունեցել արտասահմանյան շինարարական ընկերությունների ներկայացուցիչների հետ, սակայն պարզ է դարձել, որ վերջիններս հետաքրքրված են մասնակցել միայն մեծածավալ՝ 50 մլն. ԱՄՆ դոլար և ավելի արժեքով մրցույթներում:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը ավելացրեց, որ Հազարամյակի մարտահրավեր ծրագրում որևէ սահմանափակումներ չկան, հայտարարությունները տեղադրվում են մի շարք միջազգային կայքերում, և եթե արտասահմանյան ընկերությունները ցանկություն ունեն մասնակցելու, ապա որևէ խոչընդոտ չկա: Վերջիններիս մասնակցությունը դրական կլինի նաև տեղական շինարարական ընկերությունների համար, քանի որ լուրջ մրցակցության հանդիպելով ավելի կզգոնանան, որը կհանգեցնի կատարվող աշխատանքի որակի բարձրացմանը:

Ներսես Երիցյանն ավելացրեց, որ շատ դրական կլիներ, եթե արտասահմանյան և հայկական շինարարներն աշխատեին համատեղ՝ կոնսորցիումներով, քանի որ հայկական կողմն ունի լուրջ տեխնիկական բազա, իսկ արտասահմանյան կողմը՝ այն կիրառելու և շահագործելու հմտություններ: Այդպիսի համագործակցությունն անկասկած փոխշահավետ կլիներ:

Արա Հովսեփյանը լրացրեց, որ ՀՄՀ-Հայաստանը ևս շահագրգռված է արտասահմանյան ընկերությունների մասնակցությամբ, դեռ ավելին՝ հենց այս նպատակով է, որ Համաձայնագրում ամրագրված է պահանջ, որպեսզի ՀՄՀ-Հայաստանը իր բոլոր մրցույթների մասին հայտարարությունները տեղադրի միջազգային լայն տարածում ունեցող կայքերում:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հետաքրքրվեց, թե արդյոք ՀՀ ֆինանսների նախարարությունն ուսումնասիրել է ներկայացվող պայմանագրային փոփոխության և պայմանագրի գումարը վերանայելու հարցը:

Տիգրան Դավթյանը հայտնեց, որ մի շարք հանդիպումներ է ունեցել կապալառուների հետ: Բավականին մեծ աշխատանք է տարվել վերջիններիս հետ բանակցելու հնարավոր նվազագույն փոփոխության տոկոսադրույքը, քանի որ մատնանշվում էր ավելի բարձր գնած՝ մոտ 40%, սակայն փոխադարձ համաձայնությամբ ամրագրվել է 17,5 %-ը:

Քննարկումների արդյունքում **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի Պայմանագիր No RRRP-CW-03/2007 Լոտ 1, Լոտ 2, Լոտ 3, Լոտ 4, Լոտ 5 և Լոտ 6-ում ընդգրկված ճանապարհահատվածների վերականգնման աշխատանքների իրականացման համար կնքված պայմանագրերի փոփոխության նախագիծը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Սամվել Ավետիսյանը նշեց, որ բնականաբար ներկայացված ընկերությունները մրցույթով են ընտրվել, սակայն շատ դրական կլինի, եթե հնարավոր լինի, որ վերջիններս համատեղ աշխատեն Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (այսուհետև՝ ԳԱՄԿ) հետ: Ընդ որում խոսքը գնում է նաև ֆինանսական օժանդակության մասին: Այս պարագայում աշխատանքը կլինի փոխշահավետ: Ներկայումս ՀՀ-ում գործող ԳԱՄԿ-երը կանգնած են սնանկացման եզրին, մինչդեռ նմանատիպ մասնագիտացված խորհրդատվական կառույցների առկայությունը շատ կարևոր է: ԳԱՄԿ-երը ստեղծվել են Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, սակայն համաձայնագրում ամրագրված է, որ վերջիններս աստիճանաբար պետք է անցնեն 30% ինքնաֆինանսավորման, որը պետք է ձեռք բերվի մատուցվող խորհրդատվական ծառայությունների հաշվին: Ներկայումս ֆինանսավորման խնդիրը բաց է և անհրաժեշտ է բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել ԳԱՄԿ-երին օժանդակություն տրամադրելու համար:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հետաքրքրվեց, թե արդյոք ՀՀ պետական բյուջեով ԳԱՄԿ-երին աջակցության համար գումար նախատեսվել է, թե՝ ոչ:

Սամվել Ավետիսյանը հայտնեց, որ առաջարկ է ներկայացվել ԳԱՄԿ-երին տրամադրել 40 մլն. ՀՀ դրամ, սակայն այն մերժվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից:

Վահրամ Ներսիսյանցն ավելացրեց, որ երկու տարի է ՀՀ պետական բյուջեից այս նպատակով որևէ գումար չի հատկացվել, մինչդեռ ՀՀ համար գյուղատնտեսությունը շատ արդիական ոլորտ է և անհրաժեշտ է ներդնել և զարգացնել գյուղատնտեսական կուլտուրան:

Կարինե Դանիելյանը հայտնեց, որ միանում է Սամվել Ավետիսյանի մեջբերմանը, քանի որ գյուղացիների կողմից թունաքիմիկատների սխալ կիրառումը կարող է հանգեցնել նաև բնապահպանական խնդիրների:

ՀՀ Վարչապետը հորդորեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին աջակցել ԳԱՄԿ-երին:

Արա Հովսեփյանը հավաստիացրեց, որ ՀՄՀ-Հայաստանն իր ծրագրի, մասնավորապես Ջրից դեպի Շուկա բաղադրիչի շրջանակներում արդեն իսկ աշխատում է է ԳԱՄԿ-երի հետ և քաջալերում բոլոր ընկերություններին համագործակցել վերջիններիս հետ:

Ներսես Երիցյանը նշեց, որ այս կարգի հարցերում անհրաժեշտ է ապահովել նաև հետադարձ կապը ժողովրդի հետ, ստանալ վերջիններիս կարծիքները ԳԱՄԿ-երի վերաբերյալ:

Սամվել Ավետիսյանն ավելացրեց, որ ԳԱՄԿ-երի դեպքում անհրաժեշտ է նաև ցուցադրական տնտեսությունների առկայությունը, որպեսզի հնարավոր լինի գյուղացիներին ցույց տալ իրական արդյունք:

Արմեն Գևորգյանը նշեց, որ ներկայացված պայմանագիրն ըստ էության քննարկված և բանակցված է և ոչ մի խոսք չի գնում ԳԱՄԿ-երին օժանդակելու մասին, մինչդեռ դրական կլիներ նախատեսված գումարի մի մասը տրամադրել նաև ԳԱՄԿ-երին:

Աշոտ Ոսկանյանը նշեց, որ տվյալ պայմանագրով նախատեսվում է տվյալների հավաքագրում մոտ 5,000 տնտեսություններից: Եթե այս գործի իրականացման մեջ ներգրավվեին նաև ԳԱՄԿ-երը, ապա սա բավականին իրատեսական կլինի: Ըստ էության ԳԱՄԿ-երը հանդիսանում են մասնագիտացված խորհրդատվական կառույցներ, որոնք ներդնում են նոր գյուղատնտեսական տեխնոլոգիաներ և զբաղվում են այդ տեղեկատվության տարածմամբ: Վերջիններիս կողմից տպագրվում է թերթ՝ 2000 տպաքանակով, որը մեծ պահանջարկ ունի:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում Գյուղատնտեսական գործունեության հետազոտության հաջորդ փուլերի համար խորհրդատվական ծառայությունների պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 4-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Միաձայն որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու Նորա Մարտիրոսյանի հաստիքը վերանայելու և աշխատանքային պայմանագրում փոփոխություններ կատարելու հարցը:

Արա Հովսեփյանը կառավարման խորհրդի անդամներին ի գիտություն հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ Արայիկ Հովհաննիսյանը ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր ընտրվելու արդյունքում դուրս է եկել կառավարման խորհրդի կազմից: Արայիկ Հովհաննիսյանին կառաջարկվի կառավարման խորհրդին ներկայացնել իր գրավոր հրաժարականը:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը նշեց, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընդամենը երկու շաբաթից Հազարամյակի մարտահրավեր ծրագրի շահառուների խորհրդի նոր ընտրություններ են, ուստի առավել նպատակահարմար է Շահառուների խորհրդի ընտրություններից հետո ՀՀ կառավարություն ներկայացնել Շահառուների խորհրդից կառավարման խորհուրդ պատվիրակվողների նոր ամբողջական կազմը:

Հարցը **միաձայն** ընդունվեց ի գիտություն:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը